Հաստատված է
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության
«13» «Հոկտեմբերի» 2021թ
Թիվ194/03-13.10.21որոշմամբ
Վարչության նախագահ

_____ Ա. Խաչատրյան

Ուժի մեջ է մտնում 18.10.2021թ.-ից

Հրապարակման ամսաթիվը «14» «Հոկտեմբերի»2021թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասների համար www.aeb.am
Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104) - Բանկի տեղեկատու

ARMECONOMBANK
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ՄԱՆԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԻ

ԵՐԵՎԱՆ 2021

1. Անվանումը - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
   Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1
   Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am
   Կայք - www.aeb.am
   Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104)
   Ֆաքս - (37410)53-89-04
2. Ավանդը ներդրվում է անչափահաս (մինչև 18 տարին) երեխայի անունով, սակայն Ավանդի պայմանագիրը կնքվում է գումարը ներդրող անձի հետ,
3. Ավանդի ժամկետի ավարտ է համարվում երեխայի չափահաս դառնալու՝ 18 տարին լրանալու ամսաթիվի հաջորդ օրը,
4. Մինչ Ավանդի ժամկետի լրանալը գումարը կարող է տնօրինվել միայն ներդրվող անձի կողմից, իսկ ժամկետը լրանալուց հետո՝ միայն չափահաս դարձած երեխայի կողմից,
5. Մանկական ավանդը ներգրավում է ներքնշյալ պայմաններով՝

Արժույթ	Առավելագույն գումար	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
ՀՀ ԴՐԱՄ	-	7%	7.12%
ԱՄՆ Դոլար	**50,000**	3.75%	3.79%

50, 000 ԱՄՆ դոլար և ավելի գումարով ավանդի ընդունումը պայմանագրային տարին ընդունելով 365 օր, նահանջ տարվա համար՝ 366 օր

6. ***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝*** *Ավանդի ներգրավման ծառայություն բանկի* ***<<Ռոսիա-1>>*** *և* ***<<Արարատյան>>*** *մասնաճյուղերը չեն մատուցում:*

*Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$APY = (1 + r / n)^n - 1$$

որտեղ՝

1) APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:
2) r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:
3) n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ www.aeb.am »:

7. Ելնելով ավանդի ծավալից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ավանդատուներին նվիրում է անվճար պլաստիկ քարտ՝
   ա/ ArCa classic տեսակի քարտ ցանկացած ծավալի դեպքում:
   բ/ 300 000 ՀՀ դրամ և համարժեք արտարժույթից բարձր՝ Master Card standard, Master Card Gold, VISA classic, VISA Gold տեսակի պլաստիկ քարտեր:

8. Մանկական ավանդի տեսակը՝ ժամկետային:
9. Ավանդի տոկոսները հաշվարկվում են Ավանդը Բանկում ընդունվելու օրվանից մինչև Ավանդատուին վերադարձվելու նախորդ օրը:
10. Տոկոսագումարը կապիտալացվում է տարին երկու անգամ՝ հունվարի 10-ին և հուլիսի 10-ին՝ ավելացվելով ավանդի գումարին և տոկոսադրույքը շարունակվում է հաշվեգրվել ավանդի ընդհանուր գումարի նկատմամբ մուտքագրման օրվանից:
11. Տոկոսագումարը հաշվարկվում է ներդված ավանդի գումարի մնացորդի, ինչպես նաև պայմանագրի ժամկետի ընթացքում ավանդի մնացորդին ավելացված գումարների և կապիտալացված տոկոսագումարի վրա:

12. Ավանդին կարող են ավելացվել գումարներ ցանկացած պահի և ցանկացած ծավալով ավանդի ժամկետի լրանալուն նախորդող մինչև 60-րդ օրը:
13. Պայմանագրում նշված ժամկետից շուտ ավանդը կամ դրա մասը պահանջելու դեպքում հաշվեգրված տոկոսագումարը վճարվում են հաճախորդին, բացառությամբ՝ վերջին հաշվեգրման ամսաթվից մինչև ավանդը հետ պահանջելու ամսաթիվն ընկած ժամանակահատվածը, որի համար հաշվարկվում են տոկոսներ՝ 0% տոկոսադրույքի չափով:
14. Եթե Ավանդի վերադարձման ժամկետը լրանալուց Ավանդը չի պահանջվել, ապա մինչև Ավանդի փաստացի պահանջվելը Ավանդի դիմաց հաշվարկվում են տոկոսներ Բանկում գործող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների համար սահմանած տոկոսների չափով:
15. Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել Պայմանագրի 2.1 կետում նշված տոկոսները՝ Պայմանագրի 1.2 կետով սահմանված ժամկետին Ավանդը վերադարձվելու պայմանով:

16. Բանկն ավանդային պայմանագրում նշված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը, ներդրողին (ավանդատուին) տրամադրում է իր ավանդային հաշվի վերաբերյալ քաղվածք ավանդային պայմանագրում կամ ավանդատուի դիմումով նշված եղանակով, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել, բացի այդ ավանդատուի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 5-օրյա ժամկետում տրամադրել հաշվի քաղվածք բանկի հայտարարած Սակագներով՝ ներկայացված է ստորև:

Հաշվից քաղվածքների տրամադրում	ԱՆՎՃԱՐ
Տեղեկանքների տրամադրում	5,000 ՀՀ դրամ

17. Ձեր երեխան 2 տարեկան է, Դուք ավանդը ներդնում եք հունվարի 10-ին և գումարն ավելացնում յուրաքանչյուր ամիս հաստատուն չափով՝ սկսած ավանդի ներդրման երկրորդ ամսից մինչև ավանդի գործողության ժամկետի լրանալու նախորդող 60-րդ օրը: Այդ դեպքում Ձեր ներդրած գումարին Բանկը կավելացնի, համապատասխանաբար.

ՀՀ դրամ

Ավանդի գումարը	Ամսական ավելացվող գումարը	Բանկի կողմից ավելացվող տոկոսագումար		
		6 տարեկանում	12 տարեկանում	18 տարեկանում
50,000	5,000	45,815	269,181	758,983
100,000	15,000	123,356	773,646	2,192,668
200,000	25,000	214,988	1,303,367	3,710,634
500,000	50,000	458,158	2,691,807	7,589,832

ԱՄՆ դոլար

Ավանդի գումարը	Ամսական ավելացվող գումարը	Բանկի կողմից ավելացվող տոկոսագումար		
		6 տարեկանում	12 տարեկանում	18 տարեկանում
250	10	69	319	790
500	20	138	639	1,579
750	30	206	958	2,369
1,000	50	308	1,499	3,771

* տարին հիմք է ընդունվել 365 օր, ընդ որում տոկոսագումարները հաշվարկված են հաշվի առած եկամտահարկը

18. Հիմք ընդունելով Բանկի և հաճախորդի միջև երկարատև համագործակցությունը, հաճախորդի գործարքների ծավալները և այլ հիմնավոր պատճառներ՝ Բանկի կողմից կարող են կիրառվել այլ սակագներ և դրույթներ, որոնք սահմանվում են այլ փաստաթղթերով և (կամ) լրացուցիչ կնքվող պայմանագրերով, համաձայնագրերով:
19. Երրորդ անձանց կողմից ավանդը չի կարող համալրվել:
    19.1 Այլ անձանց կողմից ավանդատուի ավանդը օգտագործելու կամ տնօրինելու լիազորությունները ընդունվում են, եթե լիազորությունը տրվել է նոտարով վավերացված լիազորագրով կամ բանկում անձամբ ավանդատուի կողմից՝ բանկի աշխատակցի ներկայությամբ և հաստատումով ձևակերպված և ստորագրված՝ գրավոր լիազորագրով,
20. Պայմանագրից բխող վեճերի առաջացման դեպքում ավանդատուն գրավոր դիմում է բանկին և 10 աշխատանքային օրվա ընթացքում ավանդատուին տրվում է դիմումի վերաբերյալ պատասխան: Պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում ավանդատուն իրավունք ունի դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով:

21. Մանկական ավանդի ներդրման նվազագույն սկզբնական գումարի սահմանափակում չկա, վճարվող տոկոսագումարը ենթակա է հարկման «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով:
22. Ավանդները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն.
   - միայն ՀՀ դրամով բանկային ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է,
   - միայն արտարժութային բանկային ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է,
   - ՀՀ դրամով և արտարժույթով բանկային ավանդների դեպքում, եթե դրամային բանկային ավանդը մեծ է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է միայն դրամային բանկային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով,
   - ՀՀ դրամով և արտարժույթով բանկային ավանդների դեպքում, եթե դրամային բանկային ավանդը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:
23. *ֆինանսական կազմակերպությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում)*
24. *ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, համագործակցությունների, կամ անդամակցությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն կարող են ունենալ սպառողների վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»)*
25. *«ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»*
26. *«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է» «Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ www.fininfo.am*
27. **Ավանդատուի կողմից ավանդը ներդնելու համար պահանջվում է՝**
   - Անձը հաստատող փաստաթուղթ
   - Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթը (ՀՀ քաղաքացիների համար)
   - Ելնելով տարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: